

ԱՆՑԵԱԼՔ

ԵՂԻՇԵ ԹԱՂԻՌՍԵԱՆ

Այս տարւայ յունւար 24-ին Թիֆլիզում մեռել է նկարիչ Եղիշէ Թաղէսսեանը։ Հանդուցեալլը ծնւել է 1870 թւին Վաղարշապատում։ Երկրորդական կրթութիւնը ստացել է Լազարեան ձեմարանում, որից յետոյ ուսել է Մոսկվայի նկարչական դպրոցում, որը եւ աւարտել է 1895 թւին։

Դպրոցի պրոֆեսորներից Թաղէսսեանի վրա ամենից շատ ազգել է յայտնի նկարիչ Պօլենովը, որի հետ նա հետադային բարեկամական մօտիկ յարաբերութիւններ է ունեցել։ Պօլենովից զատ, և Թաղէսսեանը մօտիկ ծանօթութիւն է ունեցել աշխարհահոչչակ Բեպինի եւ յայտնի նկարիչ Սերովի, Կորովինի, Լեվիտանի, Վասնեցովի եւ Բորիսով-Մուսատովի հետ, որոնք եւ ազգել են նրա տաղանդի վրա։

Նկարչական գործունէութիւնը Թաղէսսեանը սկսել է Մոսկվայում եւ առաջին փոկ գործերից յետոյ հոչչակ է ձեռք բերել, շահելով նախ Մորոզովի եւ առաջ Բեպինի անւան մրցանակները։

1901 թ. նա փոխադրւել է Թիֆլիզ եւ կարգւել է նկարչական դպրոցի դաստիօս։ Այդ պաշտօնը նա վարել է մինչեւ իր մահը։ Խորհրդագործ իշխանութեան օրով հալածանքների է ենթարկւել ի միջի այլոց նաեւ այն պատճառով, որ 1926-ին իր տան արհեստանոցի մէջ աւարտել է տարիներ առաջ յդացած իր «Յիսուս Գերսեմանի պարտէզի մէջ» նկարը։ Այս «ոճրագործութեան» համար Թաղէսսեանը արտաքսւել է գալորոցից, զրկւել է իր բնակարանից եւ երկար ժամանակաշրջանութեան։ Նակ քաշքաւել է Զեկա ու ենթարկւել այնտեղ հաւատաքննութեան։ Սիրերիոյ աքսորից աղատւել է չնորհիւ իր վրացի պաշտօնակիցների արտակարգ ճիգերի։

Թաղէսսեանը եղել է հայ նկարչութեան Հիմնադիրը։ 48 տարւայ նկարչական գործունէութեան ընթացքում արտադրել է մօտառու 450 պաստառներ, որոնց մէջ տիրական տեղ են բռնում հայրապէս 120 պատճառներ։ Իր հակումներով հանդուցեալլը բնանկարիչ էր կական նկարները։ Իր հակումներով հանդուցեալլը բնանկարիչ էր (փէյլաժիստ) եւ ամենազեղեցիկ գործերի մէջ վերարտադրել է հայ (փէյլաժիստ) եւ ամենազեղեցիկ գործերի մէջ վերարտադրել է հայ, բնաշխարհի տեսարանները։ 16 նկարներ վերաբերում են Մեւանին, 12-ը՝ Արագածին, 12-ը՝ Բիւրականին, 13-ը՝ Մասիսին, 15-ը՝ Վաղարշապատին, 12-ը՝ Աղուլիսին ու տեսարաններին։

Դիմանկարներ քիչ է տւել, ընդամէնը մի քանի հատ։ Դրանց մէջ յայտնի են Կոմիտասի երկու պորտուէտները եւ Յովհ։ Թումանեանի սքանչելի դիմանկարը։

ՆԵՐՍԷՍ ՕՀԱՆԵԱՆ

Տարագրութեան բարոյալքուած պայմաններու մէջ տառապելով՝ վերջերս Փարիզի մէջ մեռաւ մէկը մեր լաւագոյն այլ համեստ հասարակական գործիչներէն։ Երբեք կուսակցական չէ եղած, բայց լաղոյն բարեկամն էր ամէն անոնց, որոնց մէջ կը տեսնէր անշահամնդիր ու նևիրւած իրական մշակը հայ հայրենիքի եւ ժողովրդի։

Որբ էր եւ որբանոցներու մէջ մեծաւ, ու երբ նետւեցաւ կեանքին երախը, նևիրւեցաւ աղդային-հասարակական ասպարէզին, իրեն յատուկ եռանդովին ու անշահամնդիր խանդովը։ 1890-1918 թ. թ. Պոլսոյ հայ հասարակական եւ աղդային գործիչներէն էր։ Համեստ էր անոր մտաւոր պաշարը, բայց բովանդակ իր կարողութիւնը ու մանաւանդ բարոյական կորովը ի սպաս դրած էր ժողովուրդին։

Մասնաւորապէս ջերմ գուրգուրանք մը ունէր գէպի գեռահաս սերունդը. հայրիկն էր անոնց իր բովանդակ առումով. անոնց ամէն մէկ կրթական, մարզական եւ այլ գաստիարակիչ ձեռնարկ կամ շարժում կը քաջալերէր անով։ Ներսէս Օհանեանը իր բովանդակ բարոյական դիմագծով եւ զգայուն հոգիով աչքի զարկաւ մանաւանդ սահմանադրութեան տարիներէն մինչեւ ընդհ. պտերազմին սկիզբը։

Սահմանադրութեան առաջին գերագոյն խանդավառութիւններու շրջաններուն, մանկական յափշտակութեամբ կը հետեւէր հայ զարթօնքին ու անոր առաքեալներու քայլերուն։ Այդ տարիներուն աղդային երեսփոխան էր եւ ժողովին խղճի ձայնն էր յաճախ՝ բոլոր ներքին աղտեղութիւններու մթնոլորտին մէջ։ Երբեմն կուսակցական կերքը իր ծայրայեղ աստիճաններուն հասած վայրկեաններն, անոր հուժկու եւ խոր ցաւով ու անկեղծութեամբ լեցուն, մերթ յանդիմանական եւ մերթ աղեկսական շեշտն էր, որ կը մեղմացնէր կիրքերը։ Բաղմաթիւ անգամներ նա իւրովի միջնորդի դեր ստանձնած է կուսակցութիւններու միջեւ տիրող տարակարծութիւնները վերացնելու եւ համագործակցութիւն ստեղծելու համար։

Շատ կապւած էր Վռամեանին եւ Զարդարեանին. երկրպագուն էր Շահրիկեանի մտրակող բնաւորութեանը։

Այս նւիրւած ու ժողովրդասէր մարդը, համեստ իր դիրքովը, լուսաւոր շող մըն էր անցեալ երկու տասնամեակներու արեւմտահայ քաղաքական եւ հասարակական կեանքին մէջ։